ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
«04» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թ., ժ. 11:00

Օրակարգ՝

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը, դրանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, առաջարկվող փոփոխությունները:
2. «Ընտանեկան բռնության դեպքերի տեղեկատվական վիճակագրական համընդհանուր բազա» ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանք:
3. Այլ հարցեր

Մասնակցեցին՝
Ժ.Անդրեասյան, Է.Վիրապյան, Գ.Հովակիմյան, Ա.Մուրադյան, Ա.Վարդանյան, Է.Արշակյան, Մ.Ապերյան, Լ.Ահարոնյան, Ա.Դանոյան, Ս.Հարությունյան, Տ.Աղաբեկյան, Կ.Դավթյան, Մ.Դավթյան, Ս.Ղալթախչյան, Մ.Ղալաչյան, Լ.Սարգսյան, Ն. Պետրոսյան, Ն.Գալստյան, Գ.Ավագյան

Հրավիրվածներ՝
Մ.Հովհաննիսյան (ԱՄՆ դեսպանատուն), Ի.Մկրտչյան (ԱՄՆ դեսպանատուն), Ա.Խաչատրյան (UNFPA)

Նիստը բացեց և առաջին հարցը ներկայացրեց Խորհրդի նախագահ՝ Ժ.Անդրեասյանը: Նա ողջունեց մասնակիցներին և հույս հայտնեց, որ այս պլատֆորմը կօգտագործվի ոլորտում առկա խնդիրների արդյունավետ լուծման համար: Ներկայացնելով ընթացիկ տարում ձեռնարկած քայլերը՝ տիկին Անդրեասյանը շեշտեց, որ թեև դրանք բավարար չեն, սակայն նախանշում են ընտանիքում բռնության դեմ պայքարին ուղղված բարեփոխումների սկիզբը. երկու փուլով կազմակերպվել է գործող աջակցման կենտրոնների մասնագետների վերապատրաստումը, ավարտվել է օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի ընդունման գործընթացը, նախարարությունը ստորագրել է եռակողմ համաձայնագիր, որի շրջանակում նախատեսվում է ոչ միայն շարունակել վերապատրաստումները, այլև ստեղծել նոր կենտրոններ, ՀՀ պետական բյուջեի միջոցների ներդրմամբ՝ համաֆինանսավորման եղանակով 2020թ. նախատեսվում է ստեղծել երկու ապաստարան: Թվարկված գործողությունների համատեքստում կարևորվեց երեխաների համար համապատասխան ծառայությունների տեսակների և ցանցի ընդլայնումը: Այնուհետև Ժ.Անդրեասյանը ներկայացրեց օրենքում առաջարկվող փոփոխությունների փաթեթը:

Նա նշեց, որ անդրադարձ է արվել մի քանի կարևոր դրույթներին, մասնավորապես՝ վերանայվել են օրենքի այն հոդվածները, որոնք վերաբերում են սահմանումներին (ավելացել են նոր հասկացություններ, խմբագրվել է «աջակցության կենտրոն» հասկացությունը), պետական մարմինների իրավասությունների շրջանակում հստակեցվել են պատասխանատվությունները (օր.՝ ռեաբիլիտացիոն ծրագրերի իրականացում), սահմանվել են նոր, օրենքում բացակայող, սակայն շատ կարևոր կարգավորումներ, օր.՝ աջակցության և պաշտպանության նպատակով անձի ուղղորդումը, հստակեցվել է նաև ապաստարանի կարգավիճակը, վերացվել են օրենքում առկա հղումների հետ կապված անճշտությունները:

Ելույթ ունեցան՝
Ն.Գալստյանը, Ա.Վարդանյանը, Գ.Հովակիմյանը, Ս.Ղալթախչյանը, Լ.Ահարոնյանը, Գ.Ավագյանը:

Ն.Գալստյանն առաջարկեց քննարկել նախազգուշացման դրույթները ուժը կորցրած ճանաչելու հնարավորությունը, քանի որ, ինչպես ցույց է տալիս միջազգային և տեղական փորձը, նախազգուշացման կիրառումը ստեղծում է անպատժելիության մթնոլորտ: Լ.Ահարոնյանը ավելացրեց, որ, ըստ որոշ դիտարկումների, սպանությունների մեծ մասը կատարվում է նախազգուշացումից հետո: Ն.Գալստյանի և Լ.Ահարոնյանի հետ չհամաձայնվեցին ոստիկանության և արդարադատության ներկայացուցիչներ Ա.Վարդանյանը և Գ.Հովակիմյանը, ում կարծիքով անթույլատրելի է սկսել միջամտությունը սանկցիաներից, և չդիտարկել նախազգուշացումը որպես կարևորագույն կանխարգելիչ միջոց: Բացի այդ, բանախոսները նշեցին պետք է հաշվի առնել, որ օրենքը դեռ ամբողջ ուժով չի գործում, հետևաբար գլոբալ փոփոխություններին անդրադարձ կատարելը դեռ շուտ է:
Մասնակիցներն անդրադարձ կատարեցին «վերահսկողական վարք» և «զուգընկեր» հասկացություններին, նշելով, որ դրանք պետք է դիտարկվեն միջանձնային հարաբերությունների համատեքստում: Քննարկվեց մշակույթի դերը և ազդեցությունը երևույթի կանխարգելման և մտածողության ձևավորման հարցում: Խոսվեց բռնության ենթարկված անձանց բժշկական օգնության մասին: Գ. Ավագյանը նկատեց, որ ի տարբերություն ամբուլատոր ծառայությանը, որն անվճար է՝ ստացիոնար բուժսպասարկումը, որի կարիքը գրեթե միշտ լինում է, հնարավոր չէ ապահովել առանց համապատասխան իրավակարգավորումների:

Երկրորդ հարցը ներկայացրեց Տ.Աղաբեկյանը: Նա համառոտ նկարագրեց ծրագրի բովանդակությունը, նշեց նպատակները, տվյալների հավաքագրման

սկզբունքները, մուտքագրվող և ելքագրվող տվյալների նկատմամբ պահանջները, խոսեց ծրագրի շրջանակում տվյալների համադրման և վերլուծության հնարավորությունների, տվյալների հավաքագրման համատեքստում օգտագործվող հասկացությունների մասին:

Ելույթ ունեցան՝
Ժ.Անդրեասյանը, Մ.Հովհաննիսյանը:

Ժ.Անդրեասյանը ավելացրեց, որ որոշակի ժամանակահատվածի կտրվածքով ծրագիրը պետք է հնարավորություն ունենա գրաֆիկական պատկեր ստանալու և վերլուծելու համար, ելքի տվյալները, որոնք չեն պարունակում անձնական տվյալներ, պետք է բաց լինեն բոլորի համար՝ հանդես գալով իբրև քաղաքականության մշակման հիմք, տեղեկատվական և հետազոտական ռեսուրս, մուտքի տվյալները՝ միայն օրենքով սահմանված և համակարգում ընդգրկված պետական կառույցներին և դրանցում առանձնացված աշխատակիցներին: Մ.Հովհաննիսյանը նկատեց, որ նման ծրագրերի մշակման գործընթացում շատ կարևոր է ծրագրավորողի մասնակցությունը:
Ամփոփելով նիստը՝ Ժ.Անդրեասյանը առանձնացրեց հետևյալ հարցադրումները.
առաջարկվել է՝

- ընդլայնել փոփոխությունների շրջանակը,
- վերանայել բռնության հասկացությունը,
- ուժեղացնել երեխայի իրավունքի պաշտպանությանն ուղղված դրույթները,
- քննարկել օրենքի շրջանակում կողմերի հաշտեցման ապահովման հարցը:

Բացի այդ, մտավախություն է հնչել առաջարկվող բազայի կապակցությամբ՝ ծրագրային ապահովության և գաղտնիության պաշտպանության մասին:

Որոշվեց՝
1.Օրենքում գլոբալ փոփոխություններ կատարելու հարցին վերադառնալ ավելի ուշ, օրենքի գործողությունը գնահատելուց հետո:
2.Ներկայացված առաջարկությունները՝ մինչև միջգերատեսչական շրջանառման դնելը աշխատանքային կարգով տրամադրել խորհրդի անդամներին,
3. «Ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս անձին ոստիկանության կողմից վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն ուղղորդելու կարգը և ուղղորդելու թերթիկի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկումը իրականացնել համապատասխան օրենսդրական կարգավորումներից հետո՝ համապատասխան լրամշակմամբ:

4. Ի գիտություն ընդունել Տ.Աղաբեկյանի կողմից ներկայացված «Ընտանեկան բռնության դեպքերի տեղեկատվական վիճակագրական համընդհանուր բազա» ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքը և, պայմանականորեն, երկրորդ փուլում ներգրավել ծրագրավորողի՝ բազայի ստեղծման աշխատանքներն ավարտին հասցնելու համար: